

2.

ՅԱՐԱՐԱԹԻՒՆ Վ. ԼԵՒՈՆՆԵՆ

Կ. ՊՈԼՍԵՑԻ, ԱՐՔ. ԿԵՍԵՐՈՅ ՊԵՆՍՏԻՆԱՑԻՈՑ
(1670—1738)

Հատ ծանօթ անձ է գրագետներու Յակոբ Վ. Վիլոտ (P. Jacques Villotte) գաղղիացի Յիսուսեան կրօնաւորը, որ իբրեւ քաջ հայագէտ 1684էն ի վեր առաքելութիւն կատարած է Հայաստան եւ Պարսկաստան Հայերու մէջ, եւ 1710—1714 հինգ կրօնական գրքեր հրատարակած է՝ իր լատին-հայ մեծ բառգրքէն զատ:

Ասոր հրատարակած գրքերու մէջ կայ 58 էջէ բաղկացեալ փոքրիկ տետրակ մը, որուն վերնագիրն է. «Պատմութիւն Կաթողիկոսաց եւ Թագաւորաց Հայոց: Շարադրեալ ի Յակոբ Վ. է ի կարգէն Յիսուսեանց, եւ տպեցեալ խարճիւք եւ հոգաբարձութեամբ Տեառն Արութենի արհիեպիսկոպոսի Կ. Պոլսեցւոյ, 1713 Սեպտ. ի 30 ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնիոսի Պոլթօլի, Մեծաւորաց հրամանաւ:» Հեղինակը սոյն տետրակին մէջ մատնանիչ կ'ընէ կաթողիկէ հաւատքի հետեւող մէկ քանի կաթողիկոսներ: Տետրակին յիշատակարանին մէջ կ'ըսուի. «... Յիշեսցիք զ'ի լոյս ածող սորին Տէր